ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 474-Ա

13 11 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ «ԹԱԼԻՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՈՎԻ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ, ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 108-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 2-ՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին ու 2-րդ մասերով և հիմք ընդունելով «Թալինի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2023 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 177 գրությունը, որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2023 թվականի ապրիլի 21-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի

աշխատակազմի ենթակայության 100 տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Թալինի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի կազմակերպության կողմից վճարովի սկզբունքով տրամադրվող ծառայությունների, հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակների ու սակագների ցուցակը, հաստիքացուցակը և եկամուտների ու ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» 108-Ա որոշման հավելված 2-ի «Անձնակազմի կառավարման բաժնում» կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ.

- «Անձնակազմի բաժնի պետի օգնական», մեկ դրույքաչափ, 130 000 (մեկ հարյուր երեսուն հազար) դրամ վարձատրություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 11/13/2023 16:03:28 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ